

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՒԵԳԻՍ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

13 դեկտեմբերի 2016 թվականի

թիվ 28

քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից թեթև արդյունաբերությունում նոր տեխնոլոգիաների յուրացման եւ կիրառման համատեղ նախագծերի իրագործման մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան Եվրասիական միջկառավարական խորհրդի 2015 թվականի մայիսի 29-ի թիվ 3 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների թեթև արդյունաբերության զարգացման 2015-2016 թվականների միջոցառումների ծրագրի 6-րդ կետի իրագործման նպատակներով,

«Արդյունաբերական համագործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 27 հավելված) 2-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան, «Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման եւ գործառման մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» Եվրասիական միջկառավարական խորհրդի 2016 թվականի ապրիլի 13-ի թիվ 2 որոշմամբ,

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից (այսուհետ համապատասխանաբար՝ անդամ պետություններ, Միություն)՝ թեթև արդյունաբերությունում նոր տեխնոլոգիաների համատեղ յուրացման եւ կիրառման, նոր շուկաների, այդ թվում՝ ծառայությունների շուկայի յուրացման,

թեթեւ արդյունաբերությունում օգտագործվող առաջատար տեխնոլոգիաների արագ տարածման համար Միության շրջանակներում գիտական ներուժի արդյունավետ օգտագործման նպատակով,

հանձնարարում է անդամ պետություններին «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Միության պաշտոնական կայքում, սույն հանձնարարականի հրապարակման օրվանից անդամ պետությունների կողմից թեթեւ արդյունաբերությունում նոր տեխնոլոգիաների յուրացման եւ կիրառման, ինչպես նաեւ թեթեւ արդյունաբերությունում նոր տեխնոլոգիաների յուրացման եւ կիրառման համատեղ նախագծերի իրագործման դեպքում (գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական աշխատանքներ) (այսուհետ՝ համատեղ նախագծեր)՝

1. Առաջնորդվել թեթեւ արդյունաբերության ոլորտում հետազոտությունների եւ մշակումների, ինչպես նաեւ դրանք իրականացնող նոր կազմակերպությունների եւ ձեռնարկությունների հեռանկարային ուղղությունների ցանկով՝ թիվ 1 հավելվածի համաձայն, ինչպես նաեւ համատեղ նախագծերի իրագործման մասին առաջարկությունների ցանկով՝ թիվ 2 հավելվածի համաձայն:

2. Ոսումնասիրել թեթեւ արդյունաբերությունում նոր տեխնոլոգիաների համատեղ յուրացման եւ կիրառման հարցում արտադրողների շահագրգռվածության (պահանջարկի) խթանումն ապահովելու հնարավորությունները, այդ թվում՝ միջազգային բանկերի կողմից համատեղ նախագծերի մասնակիցներին այդպիսի նախագծերի իրականացման համար վարկավորման հատուկ պայմաններ տրամադրելու միջոցով:

3. Համատեղ նախագծերի իրագործման համար ապահովել անհրաժեշտ պայմաններ, այդ թվում՝ հետեւյալի հիման վրա՝

ա) թեթեւ արդյունաբերության ոլորտում անդամ պետություններում ստեղծված նորարարական եւ ինժինիրինգային կենտրոնների, որոնք ձեւավորվել են թեթեւ արդյունաբերության ոլորտում մասնագիտական կրթության հաստատությունների մասնակցությամբ.

բ) թեթեւ արդյունաբերության ոլորտում գործող տեխնոլոգիական պարկերի, արդյունաբերական պարկերի եւ արդյունաբերական կլաստերների.

գ) Միության մարմինների ակտերին համապատասխան ստեղծված՝ գերակա եվրասիական տեխնոլոգիական հարթակների:

4. Անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության ճյուղային ասոցիացիաների, գիտական կազմակերպությունների եւ գործարար համայնքի մասնակցության դեպքում սահմանել՝

ա) նոր տեխնոլոգիաների յուրացման եւ կիրառման, այդ թվում՝ սույն հանձնարարականի թիվ 1 եւ թիվ 2 հավելվածներով նախատեսված հետազոտությունների հեռանկարային ուղղությունների վերաբերյալ մշակումների մասով անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության արտադրանքն արտադրողների կարիքները.

բ) թեթեւ արդյունաբերության այն կազմակերպությունները եւ ձեռնարկությունները, որոնց հարթակում կարող են անցկացվել թեթեւ արդյունաբերությունում նոր տեխնոլոգիաների յուրացման եւ կիրառման ոլորտում փորձի փոխանակման համատեղ ուսուցողական միջոցառումներ:

5. Մինչեւ 2017 թվականի հուլիսի 1-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնել՝

ա) տեղեկատվություն.

2012-2016 թվականներին արտադրության մեջ ներդրված, ինչպես նաեւ մոտակա 3 տարիների ընթացքում արտադրության մեջ ներդրվելիք նորարարական մշակումների մասին (մշակողների եւ բացառիկ իրավունքներ ունեցողների համաձայնության դեպքում).

թեթեւ արդյունաբերությունում նոր տեխնոլոգիաների յուրացման եւ կիրառման մասով՝ սույն հանձնարարականի 4-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան՝ անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության արտադրանքն արտադրողների կարիքների մասին.

Թեթեւ արդյունաբերության ոլորտում եւ հարակից ճյուղերում արդյունաբերական-նորարարական ենթակառուցվածքի գործող օբյեկտների, այդ թվում՝ թեթեւ արդյունաբերության ոլորտում կլաստերների, (արդյունաբերական, ինդուստրիալ, նորարարական), տեխնոլոգիական պարկերի, նորարարական եւ ինժինիրինգային կենտրոնների մասին.

Թեթեւ արդյունաբերության ոլորտում նորամուծությունների մշակման եւ ներդրման արտոնագրերի մասին.

այն խոչընդոտների մասին, որոնք առաջանում են թեթեւ արդյունաբերությունում նոր տեխնոլոգիաների համատեղ յուրացման եւ կիրառման ժամանակ, եւ դրանց վերացման վերաբերյալ առաջարկների մասին.

բ) համատեղ նախագծերի անձնագրերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի ձևի.

գ) անդամ պետությունների արտադրողների մասնակցությամբ թեթեւ արդյունաբերությունում նոր տեխնոլոգիաների, մշակման յուրացման եւ կիրառման ոլորտում փորձի փոխանակման համատեղ միջոցառումների կազմակերպման եւ անցկացման վերաբերյալ առաջարկություններ՝ սույն հանձնարարականի 4-րդ կետի «բ» ենթակետին համապատասխան.

դ) Միության մարմինների կողմից այն ակտերի ընդունման վերաբերյալ առաջարկություններ, որոնք անհրաժեշտ են համատեղ նախագծերի իրագործման, ինչպես նաեւ անդամ պետությունների կողմից այդպիսի նախագծերի իրագործման համար Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից խորհրդատվական եւ համակարգողական բնույթի աջակցություն ցուցաբերելու համար (անհրաժեշտության դեպքում):

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝

S. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի

2016 թվականի դեկտեմբերի 13-ի

թիվ 28 հանձնարարականի

ՑԱՆԿ

**Թեթև արդյունաբերության ոլորտում հետազոտությունների եւ մշակումների
հեռանկարային ուղղությունների, ինչպես նաեւ դրանք իրականացնող գիտական
կազմակերպությունների ու ձեռնարկությունների**

Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը	Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը
--	--

Բելառուսի Հանրապետություն

Ժակարդային, վուշից պատրաստված, վարագույրի գորելենային
գործվածքներ՝ մթեցման էֆեկտով

«Օրշանսկի վուշի մշակման գործարան» ՀԱԱՈԻՁ

Վուշից պատրաստված, ժակարդային գործվածքներ՝ բազմերանգ նկարի
ծավալային էֆեկտներով, դեկորատիվ ծածկոցների համար

Վուշից պատրաստված դեկորատիվ, ժակարդային գործվածքներ՝ բազմերանգ

Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը	Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը
<p>հին ասեղնագործության էֆեկտով, ինտերիերի եւ կահույքի ձեւավորման համար</p>	
<p>Ճաշասենյակի սպիտակեղենի համար նոր տեսակի բամբակացված մանվածքից բարդ կառուցվածքի գործվածքներ՝ գունավոր եւ սպիտակեցված</p>	
<p>Վուշից պատրաստված հատված-խտացված կառուցվածք ունեցող թեթեւ գործվածքներ՝ շերտավարագույրի տեսակի</p>	
<p>Վուշից պատրաստված բարդ կառուցվածքի ռեմիզային գունավոր կոստյումային գործվածքներ</p>	
<p>Արտադրության մեջ մանվածքների ու տրիկոտաժե եւ մանածագործական նյութերի նոր տեսակների ստեղծումը եւ յուրացումը</p>	<p>«Թեթեւ արդյունաբերության գիտական հետազոտությունների կենտրոն» ՀՈԻՉ</p>
<p>Բարձր առաձգականություն ունեցող հյուսվածապատ թելերի, խառը մանվածքի արտադրության նոր տեխնոլոգիաներ՝ կենցաղային եւ տեխնիկական նշանակության գործվածքների մշակման համար</p>	<p>«Վիտեբսկի պետական տեխնոլոգիական համալսարան» ԿՀ, «Լենտա» ԲԲԸ, «Գրոնիտեքս» ԲԲԸ</p>

Ղազախաստանի Հանրապետություն

<p>Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը</p> <p>Ջրալույծ պոլիմերների հիմքի վրա մանածագործական օժանդակ նոր նյութերի ստեղծում՝ մանածագործական նյութերի վերջնամշակման համար</p> <p>Բնակչության չափային տիպաբանության եւ կարի արտադրատեսակների չափային ստանդարտացման մշակում</p> <p>Բաղադրյալ, հրակայուն նոր նյութերի ստեղծում՝ արտահագուստ պատրաստելու համար</p>	<p>Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը</p> <p>Ալմաթի տեխնոլոգիական համալսարան</p>
<p>Ռուսաստանի Դաշնություն</p>	
<p>Կաշվի եւ մորթու արդյունաբերության մնացորդների հիմքի վրա չգործված կտորեղենի մշակում՝ տրված ֆիզիկա-մեխանիկական եւ շահագործական բնութագրերով</p>	<p>համակարգող՝ «Մանածագործական եւ թեթեւ արդյունաբերություն» տեխնոլոգիական հարթակ</p>
<p>Նանոկառուցվածքով մոդիֆիկացված մորթյա նյութերի արտադրության մշակում եւ ներդրում</p>	
<p>Մանածագործական եւ թեթեւ արդյունաբերության բնական նյութերի միկրոկառուցվածքի կառավարման տեխնոլոգիայի մշակում</p>	
<p>Պոլիմերային բաղադրյալ նյութերի մշակում՝ գերմոդուլային պոլիէթիլային</p>	

Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը

Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը

մանրաթելերով, գործվածքով ամրանավորած

Ռեսուրսախնայող տեխնոլոգիաների մշակում

Հատուկ հատկանիշներով նոր թելքավոր նյութերի տեխնոլոգիաներ:

Հակամանրէային եւ բիոցիդային ազդեցությամբ նոր նյութերի

տեխնոլոգիաներ: Բժշկական նշանակության նոր նյութեր (վերքի համար

նախատեսված թաղանթային ծածկույթներ, բժշկական վիրակապման նյութեր

եւ այլն)

Թելքավոր նյութերի եւ պոլիմերային նյութերի մակերեսի մոդիֆիկացիայի

վրա՝ մարող լիցքաթափման ցածրջերմաստիճանային պլազմայի, ԲՀ- եւ ԳԲՀ-

ճառագայթման եւ ուլտրաձայնի ազդեցության մասով հետազոտություն

Մանածագործական նյութերի վերջնամշակման տեխնոլոգիական

գործընթացների ինտենսիֆիկացում՝ նանոկառուցվածքային

մանածագործական օժանդակ նյութերի օգտագործմամբ

Նանոմոդիֆիկատորների կիրառման տեսական հիմնավորում

(պոլիէլեկտրոլիտներ, բարձր դիսպերսիա ունեցող ալյումասիլիկատներ,

նանոմետաղների մասնիկներ, լիպոսոմներ)՝ տարբեր թելքային

Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը

Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը

կազմություններ ունեցող մանածագործական նյութերին նոր ֆունկցիոնալ հատկանիշներ տալու համար

Նոր մանրաթելեր, կոմպոզիտներ, չգործված կտորեղեն եւ մանածագործական արտադրանք ստանալու տեխնոլոգիաներում մանրաթել առաջացնող պոլիմերների կենսաքիմիական մոդիֆիկացիա

Մանածագործական նյութերի վերջնամշակման նոր, բարձր էֆեկտիվության, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներ՝ նանոնյութերի, կենսատեխնոլոգիական մոտեցումների, նոր ներկանյութերի եւ մանածագործական օժանդակ նյութերի, ֆիզիկական դաշտերի, նոր միջավայրի հիմքի վրա ու արտադրանքի նոր տեսակների ստեղծում

Ամրանավորող մանածագործական հիմքի ստացման տեխնոլոգիա՝ հատուկ նշանակության կոմպոզիտային նյութերի համար

Վուշե ձգվող գործվածքների արտադրության տեխնոլոգիա

Նանոմանրաթելերի ստացման մեթոդների ստեղծում: Նանոմանրաթելային նոր նյութերի մշակում

<p>Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը</p>	<p>Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը</p>
<p>Եռաչափ, պրոֆիլային գործվածքների ստացման տեխնոլոգիա</p>	
<p>Չգործված գեոտեքստիլ նյութեր եւ անբարենպաստ միկրոկլիմայական պայմաններ ունեցող շրջաններում ճանապարհաշինարարության մեջ դրանց օգտագործման մեթոդներ</p>	
<p>Նանոկառուցվածքների եւ նանոօբյեկտների Էլեկտրաքիմիական կազմավորումը՝ հոսանքի կարճ իմպուլսների օգնությամբ</p>	
<p>Էլեկտրաստատիկ դաշտում պոլիմերային նանոմանրաթելերի ստացման տեխնոլոգիա</p>	
<p>Որոշակի կենսապաշտպանիչ հատկանիշներով մանկական արտադրանքի նոր տեսակների մշակում</p>	
<p>Նոր տեխնոլոգիաների մշակում եւ նոր ֆունկցիոնալ հատկանիշներով հագուստի պատրաստում</p>	
<p>Բարձր հարմարավետություն ունեցող հրակայուն եւ ջերմակայուն անհատական պաշտպանության տրիկոտաժային միջոցների արտադրության տեխնոլոգիան եւ տեսականին</p>	<p>«Մանածագործական եւ թեթեւ արդյունաբերության նորարարական գիտաարտադրական կենտրոն» ԲԲԸ («ՄԹԱ ՆԳԱԿ» ԲԲԸ)</p>

Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը

Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը

Երկարատեւ կենսասակտիվություն ունեցող նորարարական
մանածագործական նյութեր՝ բժշկական արտադրատեսակների համար

Տրիկոտաժե պաստառներից ստացված բրդյա սպիտակեղեն՝
հակամանրէային մշակմամբ

Բարձր առաձգականություն ունեցող բրդյա տրիկոտաժե
արտադրատեսակներ

Երկակի նշանակության հակամանրէային պաշտպանիչ բրդյա սպիտակեղեն

Ագրեսիվ միջավայրերից եւ նավթամթերքից պաշտպանիչ հատկանիշների
կոմպլեքսով՝ տեխնիկական նշանակության բամբակաթղթային
գործվածքների արտադրության տեխնոլոգիա

Վուշի կամ բամբակաթղթային հիմքով բամբակի, վուշից պատրաստված եւ
բամբակաթղթային մառլաների՝ բժշկական նշանակության
մանածագործական նյութերի սպիտակեցման արդյունավետ տեխնոլոգիաներ

Հրակայուն եւ ջերմակայուն գործվածքների արտադրության տեխնոլոգիա

Բամբակացման հարվածալիքային եղանակով ստացված կարճ վուշաթելի

Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը

Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը

Վերամշակման տեխնոլոգիա

Գործվածքների սպիտակեցման միափուլ եղանակի ինտենսիվացված տեխնոլոգիա

Ջուտ բրդյա եւ կիսաբրդյա մանվածքից տրիկոտաժե պաստառների բարձրորակ վերջնամշակման տեխնոլոգիա

Գործվածքների ակտիվացված գունավորման ռեսուրսախնայող տեխնոլոգիաներ

Բամբակաթղթային, վիսկոզային եւ բամբակի հետ խառնած գործվածքների բարձրորակ վերջնամշակման տեխնոլոգիա՝ սակավ ֆորմալդեհիդ պարունակող նոր սերնդի պատրաստուկների հիմքի վրա

Ցածր ջերմաստիճանի պայմաններում տրիկոտաժե պոլիէթերային պաստառների ներկման ռեսուրսախնայող տեխնոլոգիաներ

Բամբակաթղթային եւ բամբակի հետ խառնած գործվածքների բարձրորակ վերջնամշակման էկոտեխնոլոգիաներ

Էնզիմային պատրաստուկների կիրառման հիմքով մանածագործական

Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը

Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը

նյութերի բարձրորակ վերջնամշակման կենսաքիմիական տեխնոլոգիաներ

Բարձրորակ վիսկոզային եւ մոդալ մանվածքի օգտագործմամբ տրիկոտաժե պաստառների տեսականի

Էլիտային մետաքսանման տաք սպիտակեղեն

Բարձր մաշակայունությամբ տաք բարակ դասական սպիտակեղեն՝ երկակի նշանակության

Բամբակացված վուշի մանրաթել պարունակող մանվածքի, գործվածքի եւ տրիկոտաժի արտադրության տեխնոլոգիաները եւ տեսականին

Պոլիէթերային մանրանրբաթելերի օգտագործմամբ արտադրության տեխնոլոգիա եւ նոր սերնդի տրիկոտաժե պաստառների տեսականի

Ամրանավորված մանվածքի օգտագործմամբ գործվածքների եւ արտադրատեսակների արտադրության տեխնոլոգիաներ

Բարձր հարմարավետությամբ եւ մաշակայունությամբ ձմեռային բարակ սպիտակեղենի համար բրդյա տրիկոտաժե պաստառների արտադրության տեխնոլոգիա

Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը

Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը

Բարձր հարմարավետությամբ եւ բարձր առաձգականություն ունեցող բամբակաթղթային գործվածքների արտադրության տեխնոլոգիա

Ցածր գծային խտությամբ կիսաբրդյա մանվածքի նոր տեսակների եւ թեթեւ կառուցվածքով, պաշտպանիչ (հակամանրէային, ջերմապաշտպանիչ) հատկանիշներով երկակի նշանակության նորարարական մանածագործական նյութերի արտադրության ռեսուրսախնայող տեխնոլոգիաներ

Ամրանավորած թելերի հիմքի վրա՝ նոր սերնդի քամիչ գործվածքների արտադրության տեխնոլոգիա

Բարձր հարմարավետություն ունեցող սպիտակեղենային, սպորտային տրիկոտաժե արտադրատեսակների եւ անկողնային սպիտակեղենի համար կենսասակտիվ մանածագործական նյութերի արտադրության տեխնոլոգիա

Կենսասակտիվ մանրաթելեր պարունակող մանածագործական նյութերի եւ տրիկոտաժե պաստառների ստեղծման տեխնոլոգիաներ

Բազմաֆունկցիոնալ հատկանիշներով բամբակաթղթային գործվածքների՝

Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը

Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը

համակցված բարձրորակ վերջնամշակման տեխնոլոգիա

Վիսկոզային բարձրամոդուլային մանրաթելեր (ՎԲՄ) պարունակող
մանվածքի, գործվածքների եւ տրիկոտաժի արտադրության տեխնոլոգիաներ

Կենսաակտիվ պոլիէթերային բամբակյա մանրաթելերի խառնուրդից
ստացված խառնուրդային մանվածքի արտադրության տեխնոլոգիա

«Մառը» սպիտակեցման եւ բամբակաթղթային եւ բամբակի հետ խառնած
գործվածքների պատրաստման էներգախնայող տեխնոլոգիա

Վուշի նախաթելերի՝ առանց քլորի սպիտակեցման տեխնոլոգիա

Բարձր ամրության քարշային, փոխակրիչային ժապավենների
պատրաստման համար նախատեսված գործվածքների արտադրության
տեխնոլոգիա

Բրդյա եւ մետաքսյա գործվածքների սպիտակեցման տեխնոլոգիայում նոր
որոշումներ

Մանրաթելերի բոլոր տեսակներից ստացված մանածագործվածքային
նյութերի համար ջրադիմացկուն, յուղադիմացկուն եւ կեղտադիմացկուն

Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը

Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը

մշակման էներգախնայող տեխնոլոգիա

100 °C ջերմաստիճանի տակ պոլիէթերային գործվածքների ներկման

առաջադեմ էներգախնայող տեխնոլոգիա

Կոշտ, հագուստի բամբակաթղթային գործվածքների սպիտակեցման եւ ուղղակի ներկանյութերով ներկման համակցված մեթոդի ռեսուրսախնայող տեխնոլոգիա

Բամբակաթղթային, վիսկոզային եւ խառնած գործվածքների «հեշտ արդուկում» էներգախնայող վերջնամշակման կատարելագործված տեխնոլոգիա

Տրիկոտաժե բամբակաթղթային պաստառների բարձրորակ սպիտակեցման տեխնոլոգիա

Առանց քրոմի տիտանային աղաղանյութի կիրառմամբ բնական կաշվի արտադրության բնապահպանական տեխնոլոգիա

Նուբուկի ծածկույթով կամ առանց դրա ծածկույթի ագրեսիվ միջավայրում դիմացկուն բնական կաշվի արտադրության տեխնոլոգիա

Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը

Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը

Արեւադարձային պայմաններում բնական նուբուկի արտադրության տեխնոլոգիա

Մնկային հիվանդությունների նկատմամբ կայուն աստառացու կաշվի պատրաստման տեխնոլոգիա

Ոչխարի մորթու մշակման տեխնոլոգիա՝ հատուկ կոշիկների արտադրության համար էկոլոգիապես անվտանգ բարձր արդյունավետություն ունեցող նյութերի օգտագործմամբ

Նանկառուցվածքային բաղադրյալ կազմի կիրառմամբ մորթատու ոչխարենու արտադրության տեխնոլոգիա

Նոր կոնստրուկտիվ տեխնիկական որոշումների եւ հսկողության մեթոդների օգտագործմամբ անտիստատիկ կոշիկների արտադրության տեխնոլոգիա

Չոր, շոգ եւ արեւադարձային կլիմայական պայմաններում շահագործման համար հատուկ կոշիկների արտադրության տեխնոլոգիա

Անատոմիական մեջքով աշակերտական պայուսակների պատրաստման տեխնոլոգիա՝ հաշվի առնելով տարբեր տարիքային խմբերի դպրոցականների

<p>Հետազոտությունների եւ մշակումների ուղղությունը</p>	<p>Գիտական կազմակերպությունը, ձեռնարկությունը</p>
<p>կազմվածքի տիպաբանությունը</p>	
<p>Մանկական հագուստի բազմաձեւ մոդուլային կոնստրուկցիաների նախագծման գործընթացն օպտիմալացնելու մեթոդների մշակում եւ արդյունաբերական յուրացում՝ երեխաների նոր անտրոպոմետրիկ հետազոտության հիմքով</p>	<p>«Կարի արդյունաբերության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտ» ԲԲԸ («ԿԱԿԳՀԻ» ԲԲԸ)</p>
<p>Տրիկոտաժե արտադրատեսակների արդյունաբերական նախագծման համար երեխաների նոր չափային տիպաբանության մշակում եւ յուրացում</p>	
<p>Պաշտպանիչ հատկանիշների կոմպլեքսով հայրենական արտադրության նյութերի նոր տեսակներից բազմալրակազմ հանդերձանքների արտադրության տեխնոլոգիայի մշակում եւ յուրացում՝ ստորգետնյա հանքերի անձնակազմի համար՝ աշխատանքի անվտանգ պայմաններ ապահովելու նպատակով</p>	
<p>Տաքացված հատուկ հագուստի պատրաստման տեխնոլոգիայի մշակում՝ ջերմապահպանիչ եւ պաշտպանության դասի հատկանիշներով տարբերակված նյութերի փաթեթի կիրառմամբ</p>	

Քիմիական մանրաթելերից պատրաստված, այդ թվում՝ նոր նյութերի թաղանթային ծածկույթով նոր սերնդի հագուստի նյութերի մշակում

Նոր կառուցվածքով նորարարական ֆունկցիոնալ տրիկոտաժե պաստառների տեխնոլոգիայի մշակում եւ արտադրություն՝ բարձր առաձգականություն ունեցող եւ մոդիֆիկացված քիմիական մանրաթելերի ու նոր սերնդի թելերի օգտագործմամբ

Հումքային տարբեր կազմություն ունեցող ջերմամեկուսիչ չգործված կտորեղենի արտադրության նորարարական տեխնոլոգիայի մշակում՝ միկրոմանրաթելերի եւ դրանց խառնուրդների հիմքի վրա, ցածր ջերմաստիճանից պաշտպանելու համար միկրոսֆերաների օգտագործմամբ

Հումքային տարբեր կազմություն ունեցող չգործված, այդ թվում՝ վուշից պատրաստված նորարարական կտորեղենի մշակում՝ աերոգելերի օգտագործմամբ, որոնք ապահովում են միաժամանակյա կայունություն բաց բոցի, հրածակման եւ ջերմափոխանակային ջերմության նկատմամբ

Հագուստի ավտոմատացված նախագծման համակարգի ծրագրային ապահովման մշակում եւ ներդրում՝ բնակչության ժամանակակից տիպաբանության հիմքով

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի դեկտեմբերի 13-ի
թիվ 28 հանձնարարականի

ՑԱՆԿ

**Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների
կողմից թեթեւ արդյունաբերությունում նոր տեխնոլոգիաների
յուրացման եւ կիրառման համատեղ նախագծերի իրագործման
վերաբերյալ առաջարկություններ**

1. Մանկական հագուստի բազմաձեւ մոդուլային կոնստրուկցիաների նախագծման գործընթացն օպտիմալացնելու մեթոդների մշակում եւ արդյունաբերական յուրացում՝ երեխաների նոր անտրոպոմետրիկ հետազոտության հիմքով:

2. Տրիկոտաժե արտադրատեսակների արդյունաբերական նախագծման համար երեխաների նոր չափային տիպաբանության մշակում եւ յուրացում:

3. Պաշտպանիչ հատկանիշների կոմպլեքսով ներպետական արտադրության նյութերի նոր տեսակներից բազմալրակազմ հանդերձանքների արտադրության տեխնոլոգիայի մշակում եւ յուրացում՝ ստորգետնյա հանքերի անձնակազմի համար՝ աշխատանքի անվտանգ պայմաններ ապահովելու նպատակով:

4. Տաքացված հատուկ հագուստի պատրաստման տեխնոլոգիայի մշակում՝ ջերմապահպանիչ եւ պաշտպանության դասի հատկանիշներով տարբերակված նյութերի փաթեթի կիրառմամբ:

5. Քիմիական մանրաթելերից պատրաստված, այդ թվում՝ նոր նյութերի թաղանթային ծածկույթով՝ նոր սերնդի հագուստի նյութերի մշակում:

6. Նոր կառուցվածքով նորարարական ֆունկցիոնալ տրիկոտաժե պաստառների տեխնոլոգիայի մշակում եւ արտադրություն՝ բարձր առաձգականություն ունեցող եւ մոդիֆիկացված քիմիական մանրաթելերի ու նոր սերնդի թելերի օգտագործմամբ:

7. Հումքային տարբեր կազմություն ունեցող ջերմամեկուսիչ չգործված կտորեղենի արտադրության նորարարական տեխնոլոգիայի մշակում՝ միկրոմանրաթելերի եւ դրանց խառնուրդների հիմքի վրա՝ ցածր ջերմաստիճանից պաշտպանելու համար միկրոսֆերաների օգտագործմամբ:

8. Հումքային տարբեր կազմություն ունեցող չգործված, այդ թվում՝ վուշից պատրաստված նորարարական կտորեղենի մշակում՝ աերոգելերի օգտագործմամբ, որոնք ապահովում են միաժամանակյա կայունություն բաց բոցի, հրածակման եւ ջերմափոխանակային ջերմության նկատմամբ:

9. Հագուստի ավտոմատացված նախագծման համակարգի ծրագրային ապահովման մշակում եւ ներդրում՝ բնակչության ժամանակակից տիպաբանության հիմքով:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի դեկտեմբերի 13-ի
թիվ 28 հանձնարարականի

(ձեւ)

ԱՆՁՆԱԳԻՐ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից թեթեւ
արդյունաբերությունում նոր տեխնոլոգիաների յուրացման եւ կիրառման
համատեղ նախագծի

«___» _____ 20___թ.

1. Նախագծի անվանումը՝ _____

2. Նախագծի իրագործման վայրը (նշվում են Եվրասիական տնտեսական
միության անդամ պետությունների անվանումները, վարչատարածքային միավորը,
եւ անցկացվում է տարածքի բնութագրի համառոտ
նկարագրություն)՝ _____

3. Նախագծի անոտացիան (1 էջից ոչ ավելի, նշվում են նախագծի հիմնական
նպատակները եւ բովանդակությունը, բերվում են նախագծի արդյունքների
կոնկրետ կիրառման նկարագրությունը եւ մրցակցային

առավելությունները)՝ _____

4. Նախագծի արդյունքը (առևտրականացման արտադրանք, օբյեկտ) (հնարավոր է նշել մի քանի դիրքորոշումներ)՝

- արտոնագիրը
- տեխնիկական փաստաթղթերը
- արտադրատեսակների նախատիպերը, լաբորատոր (փորձնական) նմուշը
- նոր նյութերի արտադրության տեխնոլոգիան
- նորարարական արտադրանքի նոր տեսքը
- այլ (նշել)՝ _____

Արտադրանքի համառոտ նկարագրությունը, հիմնական տեխնիկատնտեսական պարամետրերը՝ _____

5. Նախագծի նպատակը (հնարավոր է նշել մի քանի դիրքորոշումներ)՝

- արտադրության տեխնիկական վերազինում
- ինժինիրինգային ենթակառուցվածքային կենտրոնների եւ այլ նորարարական ենթակառուցվածքների ստեղծում
- թեթեւ արդյունաբերության ոլորտում նոր տեխնոլոգիաների (նորարարական ապրանքների) ստեղծում եւ ներդրում
- այլ (նշել)՝ _____

6. Նախագծում ներդրումների ուղղությունը (հնարավոր է նշել մի քանի դիրքորոշումներ)՝

- ԳՀԱ

- ԳՀՓԿԱ՝ ձեռնարկությունների պատվերով
- ԳՀՓԿԱ, կապիտալիզացվում է որպես արտադրանքի ստեղծման նախագծի մի մաս
- ԳՀՓԿԱ, կապիտալիզացվում է որպես ոչ նյութական ակտիվ
- հիմնական (հեռանկարային) տեխնոլոգիաների մշակման ԳՀՓԿԱ (այսինքն՝ շուկայի նոր սեգմենտների, սկզբունքայնորեն նոր դասերի, արտադրանքի սերունդների, հեռանկարային տեխնոլոգիաների ստեղծմանն ուղղված նախագծի արդյունքներ)
- այլ (նշել) _____

7. Նախագծի արդյունքների ներդրման ճյուղը (հնարավոր է նշել մի քանի դիրքորոշումներ)՝

- մեքենաշինություն
- քիմիական արդյունաբերություն
- գյուղատնտեսություն
- թեթեւ արդյունաբերություն
- շինարարություն եւ ԲԿՏ
- տրանսպորտ
- բժշկություն եւ առողջապահություն
- այլ (նշել) _____

8. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունում նախագծի մասով աշխատանքի անցկացում՝

- այո
- ոչ

9. Ձեռնարկությունները (կազմակերպությունները), այդ թվում՝

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների, որոնք կարող են հետաքրքրված լինել նախագծի արդյունքներով, սպառողների շրջանը (կիրառման բնագավառը) եւ սպառողների խնդիրները, որոնք թույլ կտան լուծել նախագծի իրականացումը՝ _____

Արդյոք առկա է մտադրություն, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կազմակերպությունների (ձեռնարկությունների) կողմից, ձեռք բերելու նախագծի արդյունքները՝

- այո
- ոչ

10. Նախագծի շրջանակներում հիմնական տեխնիկական որոշումների արտոնագրային պաշտպանությունը *(հնարավոր է նշել մի քանի դիրքորոշումներ)*՝

- արտոնագիր
- իրավական պաշտպանություն
- առևտրային գաղտնիքի ռեժիմով պաշտպանություն (նոու-հաու)

11. Նախագծի պատրաստ լինելու աստիճանը *(հնարավոր է նշել մեկ դիրքորոշում)*՝

- նախագծի գաղափարը
- ԳՀԱ-ի չավարտված փուլը
- գիտատեխնիկական փաստաթղթերը
- ՓԿԱ-ի չավարտված փուլը
- մանրակերտը
- լաբորատոր (փորձնական) նմուշը, արտադրատեսակի նախատիպը
- նախագծանախահաշվային փաստաթղթերը

- տեխնոլոգիական եւ կոնստրուկտորական փաստաթղթերը
- արտադրության մեջ բաց թողնելուն պատրաստ լինելը
- պատրաստ է արտադրության համար
- իրականացվում է սերիական արտադրություն
- այլ (նշել) _____

12. Նախագծի տեխնոլոգիական եւ գնային աուդիտի արդյունքները (համառոտ բնութագիրը՝ աուդիտորական կազմակերպության եւ աուդիտի անցկացման ժամկետների նշմամբ) _____

13. Արդյոք մշակվող տեխնոլոգիայի (արտադրանքի) պահանջարկի վերաբերյալ մարքետինգային հետազոտություն է անցկացվել՝

- այո
- ոչ

14. Նախագծի պատրաստման աստիճանը (*հնարավոր է նշել մի քանի դիրքորոշումներ*)՝

- ներդրումների համառոտ հիմնավորում
- նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում
- տեխնիկատնտեսական հիմնավորում
- գործարար ծրագիր
- տեխնիկական առաջադրանք
- այլ (նշել) _____

15. Նախագծի իրագործման ժամկետը՝

սկսելու ենթադրյալ ժամկետը (տարին եւ ամիսը)՝ _____

ներդրումային փուլի տեւողությունը (ամիսներ)՝ _____

Նախագիծը սկսելու օրվանից ներդրումների վերադարձման ժամկետը (ամիսներ)՝ _____

16. Նախագծի ամբողջական արժեքը (բյուջեն) (հազ. ռուբլի, հազ. ԱՄՆ դոլար)՝ _____

17. Ներդրումների անհրաժեշտ ծավալը (հազ. ռուբլի, հազ. ԱՄՆ դոլար)՝ _____

18. Նախագծի ֆինանսավորումը՝

այո

ոչ

Ֆինանսավորման աղբյուրը (*հնարավոր է նշել մի քանի դիրքորոշումներ*)՝

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեն

ձեռնարկության (կազմակերպության) բյուջեն

անձնական միջոցները

այլ (*նշել*)՝ _____

Ծրագրվող պետական աջակցությունը

այո (*նշել ձեւը*)՝ _____

ոչ

19. Տեղեկություններ՝ արտադրության մասին (*անհրաժեշտության դեպքում նշվում են արտադրության բնութագիրը, հիմնական տեխնոլոգիական փուլերը (գործափուլերը) արտադրության կանխատեսումը՝ ըստ տարիների*)՝ _____

20. Նախագծի կանխատեսվող ռիսկերը *(նվազեցման կարգով)*՝ _____

21. Նախագծի նորարարական լինելու մակարդակը *(հնարավոր է նշել մի քանի դիրքորոշումներ)*՝

- շուկայում անալոգը չունեցող կոնցեպտուալ նոր նախագծեր
- սկզբունքայնորեն նոր նախագիծ, որը ներառում է սկզբունքայնորեն նոր արտադրանք, սկզբունքայնորեն նոր նյութեր եւ շուկայում անալոգը ունեցող արտադրության տեխնոլոգիաներ
- հայտնի արտադրանքի սկզբունքայնորեն նոր սեգմենտ (շուկայական նոր բաժին)
- սկզբունքայնորեն նոր արտադրանք, որը փոխարինում է շուկայում անալոգների օգտագործմանը
- արտադրության սկզբունքայնորեն նոր տեխնոլոգիա, որով շուկայում դադարեցվում է առկա անալոգների օգտագործումը
- հայտնի արտադրանքի որակի էական բարելավում
- արտադրանքի ինքնարժեքի էական (ավելի, քան 2 անգամ) նվազեցում՝ արտադրության տեխնոլոգիայի արդյունավետության բարձրացման հաշվին՝ սահմանված որակի պահպանմամբ
- որակի էական բարելավում կամ ինքնարժեքի նվազեցում՝ նոր նյութերի, նոր բաղադրիչների կիրառման հաշվին
- այլ *(նշել)* _____

22. Ներդրողների նախագծում մասնակցության ձևերը՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների այն կազմակերպությունները

(ձեռնարկությունները), որոնցով հայտատուն հետաքրքրված է (*հնարավոր է նշել մի քանի դիրքորոշումներ*)՝

- դրամաշնորհ
- մասնակցություն կանոնադրական կապիտալում, մասնաբաժնի գնում
- ներդրողի կողմից փոխառության տրամադրում
- ներդրողի կողմից հայտատուի պարտատոմսերի եւ փոխարկելի

պարտքային պարտավորությունների ձեռքբերում

վարկերի եւ այլ պարտավորությունների մասով երաշխավորության տրամադրում

- լիզինգային գործառնությունների իրականացում

ներդրողին մտավոր սեփականության նկատմամբ իրավունքների փոխանցում

- այլ (*նշել*)՝ _____

23. ԳՀՓԿԱ նախագծերի համար՝

Նախագծի արդյունքների առեւտրականացման պլանի առկայություն

- այո
- ոչ

Նախագծի արդյունքների առեւտրականացմանը մասնակցելու հարցում մշակողների պատրաստակամությունը՝

- այո
- ոչ

Նախագծի արդյունքների առեւտրականացմանը՝ մշակողների մասնակցության ձեւը

- արտադրությունում մշակումների ներդրման հարցում աջակցություն

- սեփական արտադրող ընկերության ստեղծում
- սեփական ինժինիրինգային մշակող ընկերության ստեղծում
- այլ (նշել)՝ _____

24. Նախագծի վերաբերյալ հայտին առնչվող տեղեկատվական նյութերի հետ վարվեցողության ռեժիմի մասին հայտատուի առաջարկությունները՝ _____

25. Կատարող կազմակերպության մասին համառոտ տեղեկանք (առանձին թերթի վրա՝ ոչ ավելի, քան 1 էջ):

26. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների այն կազմակերպությունների (ձեռնարկությունների) վերաբերյալ առաջարկություններ, որոնք ծրագրվում է ներգրավել նախագծում մասնակցության մեջ՝ որպես համակատարողների (համակատարողների առկայության դեպքում նշվում է նրանց մասին տեղեկատվություն՝ առանձին թերթի վրա՝ ոչ ավելի, քան 1 էջ): _____
